

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը
Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ**

27.12.2016



Միրելի՛ վայոցձորցիներ:

Ընդունեք իմ ջերմ ու անկեղծ շնորհավորանքները գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Միրելիներ՛ րս, օրեր հետո պատմություն կդառնա նաև 2016 թվականը: Այն հոբելյանական էր հայ ժողովրդի համար, որպես նորանկախ պետականության 25-ամյա տարեդարձի տարի: 25 տարիների հեռվից գնահատելով մեր երկրի անցած դժվարություններով ուղին՝ 1988-ի երկրաշարժի հետևանքներ, Արցախյան Ազատամարտ, հարկ է հպարտորեն ասել, որ Հայաստանի Հանրապետությունը, այդ թվում նաև Վայոց ձորի մարզը հաստատուն քայլերով առաջ են գնում, շնորհիվ մեր ժողովրդի հայրենասիրության, նվիրումի, ամրակուռ կամքի և երկրի լուսավոր ապագան կերտելու դարավոր երազանքի իրականացման անհատնում ցանկության: Հարգարժան վայոցձորցիներ, 2016 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի տնտեսության ամենատարբեր ոլորտներում արձանագրվեցին հաջողություններ: Եվ մենք հրաժեշտ ենք տալիս ընթացիկ տարվան, 2017 թվական մեզ հետ տանելով 2016 թվականի ընթացքում մեր ընտանիքներում և մարզում արձանագրած հաջողություններն ու ձեռքբերումները:

Ինչ խոսք, յուրաքանչյուր տարի մենք ունենում ենք նաև դժվարություններ, որոնք ի պահ են մնում նախորդ տարում: Ափսոս, որ 2016 թվականին դժվարությունների ավելացավ Այրիլյան պատերազմում զոհվածների կորստյան անդամանելի ցավը: Թեև ունեցանք կորուստներ, բայց և, այն դարձավ մեր ժողովրդի հայրենասիրության, հայրենիքին սպառնացող վտանգի պահին մեկտեղվելու, միաբանվելու պատմական փաստարկն ընդդեմ հակառակորդի ռազմական նկրտումների:

Թանկագի՛ն բարեկամներ, գալիք ամանորյա զանգերը թող ձեր ընտանիքներում ավետեն միայն երջանկության մասին: Իսկ ձեր ընտանիքներում իշխեն սերն ու միաբանությունը, ծիծաղն ու ուրախությունը:

Թող գալիք տարին լինի հաջողությունների, նոր երազանքների, ցանկությունների, նպատակների, անավարտ ծրագրերի ու ձեռնարկումների իրականացման տարի: Թող 2017 թվականը մեր երկրի համար դառնա կայուն խաղաղության, բարօրության ու ստեղծարար աշխատանքի տարի:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: